ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. փետրվարի 4-ից 8-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Արմեն Կոտոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

04.02.2020թ.-08.02.2020թ.

4. Հրավիրող կողմը՝

Բրաունշվեյգի և Բեռլինի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի միջազգային համագործակցության դեպարտամենտ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) 2020թ-ի փետրվարի 5-7-ը կայանալիք՝ «Արևելյան գործընկերության համագործակցությունը որակական ենթակառուցվածքների ոլորտում» խորագրով աշխատաժողովին:

Գործուղման ծախսերը կատարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

6. Քննարկված թեմաները՝

Շուկայի վերահսկողության ոլորտում ԵՄ և միջազգային փորձի (հատկապես եվրոպական), «RAPEX» և «Safety Gate» համակարգերի ուսումնասիրություն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- Եվրոպական Միության համատեղ շուկայի վերահսկողության մոդելի կիրառում:
- Անմիջապես սահմանին մաքսային ծառայության կողմից ոչ պարենային արտադրանքների վերահսկողության իրականացում:
- Աշխատաժողովին մասնակցել են Արևելյան գործընկերության 5 պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի, Մոլդովայի և

Ուկրաինայի տեխնիկական կանոնակարգման և շուկայի վերահսկողության ներկայացուցիչներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Նախնական որոշում է կայացվել 2020 թվականի ապրիլ ամսին կազմակերպել այց Վրաստան, որտեղ կքննարկվեն շուկայի վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է.

- Շուկայի վերահսկողության, իրացվող ոչ պարենային արտադրանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նմանատիպ հանդիպումները դարձնել պարբերական:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

10.02.2020թ.